ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0026, Երևան, Գ.Նժդեհի 23, հեռ. 49-48-11-313, www.court.am, www.datalex.am

ԴԴԱ-2 Ե - 29/09
«28» դեկտեմբեր 2023թ.

Բողոք բերող՝ «ՈՒԱՆՔԼԻՔ » ՍՊԸ
Տնօրեն՝ Արթուր Ամիրխանյան
Ներկայացուցիչ՝Գուրգեն Թորոսյան
/ք. Երևան, Կինյան 3/51 /

Պատասխանող՝ Երևանի քաղաքապետարան
/ ք. Երևան, Արգիշտի 1/

Երրորդ անձ՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն
/ ք. Երևան, Մ.Աղամյան 1/

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Քաղաքացիական գործի համարը՝ ԵԴ2/12884/02/23

Կողմերը և պահանջը՝ ըստ հայցի «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր կամ Ընկերություն) ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող կամ Պատվիրատու), երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պայմանագիրը միակողմանի լուծելու և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Ուղարկվում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 26.12.2023 թվականի որոշումը:

Քաղաքացիական գործի վերաբերյալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ նաև www.datalex.am դատական տեղեկատվական կայքից:

Առդիր որոշումը՝ « 15 » թերթ:

Դատավորի օգնական՝ Է. Հակոբյան

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ N Մ-89-24
4 «03» 01 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի վճիռ, դատավոր Լ.Սաղոյան **Գործ թիվ ԵԴ2/12884/02/23**

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

26 դեկտեմբերի 2023 թվական **ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով՝

Նախագահող դատավոր	**Նաիրա Մարգարյան**
Դատավոր	**Սլավիկ Թորոսյան**
Դատավոր	**Կարեն Համբարձումյան**

գրավոր ընթացակարգով քննելով թիվ **ԵԴ2/12884/02/23** քաղաքացիական գործով, ըստ հայցի «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր կամ Ընկերություն) ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող կամ Պատվիրատու), երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պայմանագիրը միակողմանի լուծելու և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 11.09.2023 թվականի վճռի դեմ Հայցվորի անունից (ներկայացուցիչ՝ Գուրգեն Թորոսյան) բերված վերաքննիչ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը.

«ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 10.07.2023 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պայմանագիրը միակողմանի լուծելու և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի 11.09.2023 թվականի վճռով հայցը մերժվել է:

Դատարանի հիշյալ վճռի դեմ Հայցվորի անունից (ներկայացուցիչ՝ Գուրգեն Թորոսյան) բերված վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունվել Վերաքննիչ դատարանի 14.11.2023 թվականի որոշմամբ:

Վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վերաքննիչ դատարանը 20.12.2023 թվականին կայացրել է վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու մասին որոշում:

2.Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները, պահանջը.

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Դատարանը խախտել է «Գնումներ մասին» ՀՀ օրենքի ստորև նշված իրավանորմերի պահանջները.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 7-րդ հոդվածի 1-ին մասը, 8-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածի 1-ին մասը, 13-րդ հոդվածը, 28-29-րդ հոդվածները, 57-րդ հոդվածը, 58-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 59-րդ հոդվածի 1-ին մասը, 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 62-րդ հոդվածը, 66-րդ հոդվածի 1-ին մասը, 67-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ, 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 71-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, որոնք իրենց իր հերթին հանգեցրել են բողոքաբեր հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության, արդար դատաքննության հիմնարար իրավունքների խախտմանը:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ հայցվորը մասնակցել է պատասխանողի կողմից հայտարարված ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծածկագրով ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգին և ճանաչվել է հաղթող կազմակերպություն:

Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչվելուց հետո Հայցվորը Պատասխանողին է ներկայացրել գնման ընթացակարգով նախատեսված պայմանագրի և որակավորման ապահովումները, բանկային երաշխիքները, որից հետո 10.03.2023թ. Հայցվորի և Պատասխանողի միջև կնքվել է լուսագդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների գնման թիվ ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր): Պայմանագրով Հայցվորը պարտավորվել է պատշաճ կարգով և սահմանված ժամկետներում մատուցել Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ծառայությունները, իսկ Պատասխանողը պարտավորվել է ընդունել պատշաճ մատուցված ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

Հայցվորը պատշաճ կարգով կատարել է ստանձնած պարտավորությունները, ծառայությունները մատուցել է Պայմանագրով սահմանված ժամկետներում և Պայմանագրի պայմաններին համապատասխան, ինչը հաստատվում է Հայցվորի կողմից 03.04.2023թ. և 02.05.2023թ. ներկայացված և Պատասխանողի կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրություններով և հարկային հաշիվներով:

Հայցվորը 09.06.2023թ. էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վազգեն Հարությունյանի ծանուցումը (այսուհետ՝ Ծանուցում)՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

Ծանուցումը ստանալուց հետո Հայցվորի կողմից կազմվել և Պատասխանողին են ներկայացվել առարկություններ, որոնցով Հայցվորը ներկայացրել է իր առարկությունները պայմանագիրը լուծելու մասով:

15.06.2023թ. Հայցվորն էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է Երևանի քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանի 15.06.2023թ. թիվ 1552-Ա որոշումը՝ հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Հայցվորը 30.06.2023թ. ստացել է Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վազգեն Հարությունյանի թիվ 14/118401-23 գրությունը, որով վերջինս հայտնել է, որ պայմանագիրը լուծվել է այն հիմքով, որ մատուցված ծառայությունները չեն համապատասխանել Պայմանագրով նախատեսված պայմաններին, ուստի վճարում չի կատարվելու:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը, ինչպես նաև Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը չեն համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի և Պայմանագրի պայմաններին, ոչ իրավաչափ են, ուստի պայմանագրի միակողմանի լուծումը և Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը ենթակա են անվավեր ճանաչման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի, 408-րդ, 466-րդ հոդվածների իրավակարգավորումներից, Պայմանագրի 2.1.1. կետի վերլուծությունից հետևում է, որ Պատվիրատուն՝ տվյալ պարագայում Պատասխանողը, իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը օրենքով կամ սույն դեպքում պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության և պայմանագրով նախատեսված կարգով:

Տվյալ պարագայում պայմանագիրը Պատասխանողի համար նախատեսել է պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունք բացառապես միայն այն դեպքում, երբ հայցվորի կողմից թույլ տրվի պայմանագրի էական խախտում: Նույն կետով սահմանվել են այն խախտումները, որոնք համարվում են էական, այն է՝ մատուցված ծառայության՝ պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելը և ծառայության մատուցման ժամկետի խախտումը: Միայն այս 2 հանգամանքների միաժամանակյա կամ յուրաքանչյուրի առանձին առկայության դեպքում Պատասխանողն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը:

Պայմանագրի 3.3 կետը սահմանում է, որ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Հայցվորը ստանձնած պարտավորությունները կատարել է պատշաճ կարգով, առանց որևէ խախտման, ինչը հաստատվում է հայցվորի կողմից 03.04.2023թ. և 02.05.2023թ. ներկայացված և Պատասխանողի կողմից հաստատված հանձնման-ընդունման

արձանագրություններով և հարկային հաշիվներով: Չկա որևէ հանձնման-ընդունման արձանագրություն, որը ներկայացվել է հայցվորի կողմից, բայց չի հաստատվել Պատասխանողի կողմից, չկա այդ ակտը չհաստատելու համար հիմք հանդիսացած որևէ բացասական եզրակացություն կամ առարկություն, հետևաբար հայցվորի կողմից որևէ ստանձնած պարտավորության խախտում թույլ չի տրվել և առկա չէ նման խախտման որևէ ապացույց:

Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Որոշումն իր հերթին ընդունվել է Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով, ուստի նման լուծումը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու դեպքում որպես հետևանք անվավեր պետք է ճանաչվի նաև Որոշումը, քանի որ դրա միակ հիմքը պայմանագրի միակողմանի լուծումն էր:

Ընդհանուր առմամբ՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու և անձին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար անհրաժեշտ է Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշում: Նշված նորմը կրում է իմպերատիվ բնույթ և համապարտադիր է բոլորի համար: Նման իմպերատիվ բնույթի նորմի սահմանումը Օրենսդրի կողմից նպատակ է հետապնդում սահմանափակել կամայականությունները և պաշտպանել մասնակիցների իրավունքները, որպեսզի Պատվիրատուների կողմից կամայական սկզբունքով նման որոշումներ չկայացվեն:

Ուսումնասիրելով Ծանուցումը և Պատասխանողի 15.06.2023թ. թիվ 1552-Ա որոշումը՝ պարզ է դառնում, որ այն «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների տեսանկյունից պատճառաբանված չէ, քանի որ Ծանուցման ու որոշման բովանդակությունից առհասարակ հնարավոր չէ հասկանալ հիշյալ որոշման կայացման համար փաստական և իրավական հիմքերի առկայությունը՝ որոշումն առհասարակ պատճառաբանված չլինելու, պատճառաբանական մաս չունենալու հիմքով: Որոշման պատճառաբանված լինելու սկզբունքը պահանջում է որոշման մեջ նշել այն շարժառիթները, հանգամանքները, որոնց համակցությունը հանգեցրել է հիշյալ որոշման կայացմանը: Առհասարակ, որոշման պատճառաբանվածությունը պետք է դիտարկել տվյալ ակտի այնպիսի հատկություն, որը թույլ է տալիս աներկբա ըմբռնել վիճելի հարցի, առկա փաստական հանգամանքերի, գոյություն ունեցող ապացույցների, դրանց հետազոտման և գնահատման, կիրառման ենթակա իրավական նորմերի ընտրության և մեկնաբանման ողջ գործընթացը, այն սկսելուց ընդհուպ մինչև եզրահանգումների ձևակերպումը որոշում կայացնող անձի կատարած դատողությունների ընթացքը և դրանցից տրամաբանորեն բխող արդյունքները (եզրահանգումները):

Որոշումը չի բավարարում որոշման պատճառաբանվածությանը ներկայացվող չափանիշներին, ինչպես նաև այն չի բավարարում որոշակիության սկզբունքին այն առումով, որ հայցվորը որոշումից չի կարող հստակ հասկանալ, թե կոնկրետ որ հանգամանքն է հիմք հանդիսացել տվյալ որոշումը կայացնելու համար և որպես հետևանք, զրկվել է հիշյալ որոշման վերաբերյալ առարկություններ ներկայացնելու և իր իրավունքները լիարժեք պաշտպանելու իրավական հնարավորությունից:

Թեև Պատասխանողի կողմից կայացված որոշմամբ վկայակոչվել է Պայմանագրի 2.1.3 կետը 10 հունիսի 2023 թվականի դրությամբ պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի

լուծելու մասին 09 հունիսի 2023 թվականի ծանուցումը, սակայն դա չի կարող բավարարել Որոշման պատճառաբանված լինելու պահանջը, քանի որ հենց նույն այդ ծանուցումից հնարավոր չէ պարզել, թե կոնկրետ որ հանգամանքն է հիմք հանդիսացել պայմանագիրը միակողմանի լուծելու համար:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված է, որ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վկայակոչված իրավական նորմի, Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համադրումից ակնհայտ է դառնում, որ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետք է հրապարակվի տեղեկագրում www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, դրա հրապարակման օրվանից հետո միայն Պատվիրատուն իրավունք ունի կայացնել որոշում մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին: Պատասխանողի կողմից տեղեկագրում www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում մինչ այս պահը հրապարակված չէ հայցվորի և Պատասխանողի միջև 10.03.2023թ. կնքված թիվ ԵՔ-2ԹՄԾՁԹ-23/2 ծառայությունների գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը, ինչը նշանակում է, որ Պատասխանողն իրավունք չուներ կայացնելու թիվ 1552-Ա որոշումը:

Վերոգրալի հիման վրա ակնհայտ է, որ Պատասխանողը ոչ իրավաչափ է միակողմանի լուծել պայմանագիրը, հետևաբար նման լուծումը և դրա հետևանքով կայացված որոշումը ենթակա էր անվավեր ճանաչման:

Բացի այդ, առկա են նույնանման փաստերով օրինական ուժի մեջ մտած մի շարք դատական ակտեր, որտեղ դատարանները, մեկնաբանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը, կողմերի միջև կնքված պայմանագրի կետերը, պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելը և մասնակցին գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու որոշումները, եկել են այն եզրահանգման, որ պայմանագրի լուծումը և մասնակցին գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու որոշումը չեն համապատասխանում դրանց ներկայացվող պայմաններին, քանի որ պատճառաբանված չեն, դրանցում հստակ նշված չեն, թե ինչ խախտումներ են թույլ տրվել կատարողների կողմից, որոնք հիմք են հանդիսացել պայմանագիրը լուծելու համար

Հղումներ են կատարվել «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ, 46-րդ հոդվածներին, ՀՀ քաղաքացիական օրենսգրք 347-րդ, 352-րդ, 408-րդ, 417-րդ, 437-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածներին:

Նշել է, որ Դատարանը, վերոհիշյալ իրավանորմերի և կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված վերոհիշյալ դրույթների մեկնաբանման արդյունքում պետք է

հանգեր հետևության այն մասին, որ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը օրենքով կամ սույն դեպքում՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության և պայմանագրով նախատեսված կարգով:

Տվյալ դեպքում, անդրադառնալով վեճի առարկա որոշումն անվավեր ճանաչելու հիմքերի առկայությանը, համադրելով վերոհիշյալ իրավանորմերը սույն գործով փաստերի հետ, պետք է փաստել հետևյալը.

«Գնումներ մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների տեսանկյունից պատճառաբանված որոշում չէ, քանի որ որոշման բովանդակությունից առհասարակ հնարավոր չէ հասկանալ հիշյալ որոշման կայացման համար փաստական և իրավական հիմքերի առկայությունը՝ որոշումը առհասարակ պատճառաբանված չլինելու, պատճառաբանական մաս չունենալու հիմքով:

Ըստ էության որոշման պատճառաբանված լինելու սկզբունքը պահանջում է որոշման մեջ նշել այն շարժառիթները, հանգամանքները, որոնց համակցությունը հանգեցրել է հիշյալ որոշման կայացմանը: Առհասարակ, որոշման պատճառաբանվածությունը պետք է դիտարկել տվյալ ակտի այնպիսի հատկություն, որը թույլ է տալիս աներկբա ըմբռնել վիճելի հարցի, առկա փաստական հանգամանքերի, գոյություն ունեցող ապացույցների, դրանց հետազոտման և գնահատման, կիրառման ենթակա իրավական նորմերի ընտրության և մեկնաբանման ողջ գործընթացը, այն սկսելուց ընդհուպ մինչև եզրահանգումների ձևակերպումը որոշում կայացնող անձի կատարած դատողությունների ընթացքը և դրանցից տրամաբանորեն բխող արդյունքները (եզրահանգումները):

Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը չի բավարարում որոշման պատճառաբանվածությանը ներկայացվող չափանիշներին, ինչպես նաև այն չի բավարարում որոշակիության սկզբունքին այն առումով, որ անձը, ում նկատմամբ կայացվել է հիշյալ որոշումը, կոնկրետ դեպքում, հայցվորը, որոշումից չի կարող հստակ հասկանալ, թե կոնկրետ որ հանգամանքն է հիմք հանդիսացել տվյալ որոշումը կայացնելու համար և որպես հետևանք, զրկվում է հիշյալ որոշման վերաբերյալ առարկություններ ներկայացնելու և իր իրավունքները լիարժեք պաշտպանելու իրավական հնարավորությունից:

Տվյալ դեպքում, որոշման նկարագրական մասի 2-րդ պարբերության համաձայն՝ *Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայությունների մատուցումը:*

Նույն որոշման նկարագրական մասի 5-րդ պարբերության համաձայն՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի պահանջը, որոշում է կայացվել միակողմանի լուծել պայմանագիրը:

Գտնում է, որ առաջին հերթին, անհրաժեշտ է անդրադառնալ հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման մեջ նշված պայմանագիրը միակողմանի լուծելու հետ կապված հարցին, հաշվի առնելով այն, որ հենց հիշյալ հանգամանքով պայմանավորված է, որ հայցվորի համար

առաջացել են անբարենպաստ հետևանքներ և հիմք հանդիսացել իր իրավունքների պաշտպանության հարցով հայց հարուցելու համար:

Նշված որոշման ուսումնասիրության արդյունքում, պետք է արձանագրել, որ թեև դրա 3-րդ պարբերության համաձայն, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի պահանջը, որոշում է կայացվել միակողմանի լուծել պայմանագիրը, սակայն նույն որոշման եզրափակիչ մասում պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ եզրահանգումները բացակայում են: Միաժամանակ, պատասխանողի կողմից դատարան ներկայացված փաստաթղթերում առկա է www.gnumner.minfin.am էլեկտրոնային կայքից արտատպված հրապարակված ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը (գրությունը), որի համաձայն հայտնվել է, որ Պատասխանողը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի պահանջները՝ միակողմանի լուծել է կնքված Պայմանագիրը: Մինչդեռ, որոշման ուսումնասիրությունից առհասարակ հնարավոր չէ հասկանալ, թե ի վերջո կոնկրետ ինչն է հիմք հանդիսացել հայցվոր ընկերության վերաբերյալ որոշում կայացնելու համար, ինչպես նաև այն, թե ինչն է հիմք հանդիսացել վեճի առարկա պայմանագիրը միակողմանի լուծելու համար, որոնք են պայմանագրի լուծման համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերը:

Այս առումով, անհրաժեշտ է անդրադառնալ կողմերի միջև կնքված պայմանագրով նախատեսված՝ պայմանագրի միակողմանի լուծումը կարգավորող դրույթներին:

Այսպես. Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա/ կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ/ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Քննարկվող պայմանագրի 2.1.3 կետը նախատեսում է պայմանագիրը էական խախտման հիմքով լուծելու իրարից տարբերվող երկու հիմք, որոնցից յուրաքանչյուրի կամ երկուսի միասին կիրառման համար անհրաժեշտ է բավարար փաստական հիմքերի առկայություն: Մասնավորապես, որպես օրինակ, Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի կիրառման համար որպես փաստական հիմք կարող է հանդիսանալ պայմանագրով նախատեսված աշխատանքները որակական առումով առհասարակ չկատարելը կամ դրանց թերի կատարելը: Ընդ որում, հիշյալ կետի կիրառման համար բավարար չէ զուտ պատվիրատուի կարծիքը կամ հայտարարությունը, այլ հիշյալ կետով պայմանագիրը լուծելու համար աշխատանքները կատարված չլինելը կամ դրանց թերի կատարված լինելը պետք է ունենա համապատասխան արձանագրում:

Պայմանագրի 3.3 կետի համաձայն, եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Այսինքն, այն դեպքում, երբ պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացող հանգամանքները կապված են 2.1.3 կետի «ա» ենթակետի կիրառման հետ, ապա, ի թիվս այլնի, պատվիրատուն պետք է կազմի նաև բացասական եզրակացություն, որում պետք է շարադրվեն աշխատանքը չընդունելու կամ աշխատանքի ընդունումը մերժելու հանգամանքները, հակառակ դեպքում պայմանագրի 3.2 կետի տրամաբանությամբ դրանք համարվում են ընդունված:

Կոնկրետ դեպքում, Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի կիրառման մասով անհաժեշտ փաստական հիմքերի առկայության հանգամանքը որոշման հետազոտումից չի բացահայտվում, այն առհասարակ բացակայում է:

Ինչ վերաբերում է Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի կիրառման հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու հարցին, ապա այս հիմքով պայմանագիրը լուծելու մասին որոշում կայացնելու պահի դրությամբ պետք է լինի հստակ արձանագրում այն մասին, թե պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման կամ դրանց կոնկրետ մասի կատարման որ ժամկետներն են խախտվել, ինչ հանգամանքների առկայությամբ են դրանք խախտվել, և արդյոք այդ ժամկետների խախտումը կապված չի եղել կատարողից անկախ պատճառներով, առավել ևս այն պայմաններում, որ 10.03.2023թ.-ի պայմանագրի Հավելված 1-ի համաձայն աշխատանքի տեխնիկական բնութագրի համաձայն պայմանագիրն ուժի մեջ է մինչև 25.12.2023 թվականը:

Այս տեսանկյունից անդրադառնալով վեճի առարկա որոշմանը, պետք է արձանագրել, որ դրա ուսումնասիրությունից հնարավոր չէ հասկանալ, թե կոնկրետ ինչպիսի փաստերի համակցության առկայության արդյունքում է կայացվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը: Նույն որոշման ուսումնասիրությունից հնարավոր չէ հասկանալ, թե կոնկրետ պայմանագրով նախատեսված որ իրավական հիմքով է միակողմանի լուծվել պայմանագիրը այն առումով, որ ինչպես արդեն վերը նշեց, պայմանագրի 2.1.3 կետը նախատեսում է պայմանագիրը էական խախտման հիմքով լուծելու իրարից տարբերվող երկու հիմք, որոնցից յուրաքանչյուրի կամ երկուսի միասին կիրառման համար անհրաժեշտ է բավարար փաստական հիմքերի առկայություն:

Այս պայմաններում, գտնում է, որ հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը զուրկ է որևէ հիմնավորումից և պատճառաբանությունից, որպիսի պայմաններում Դատարանն այն իրավաչափ համարել չէր կարող և պարտավոր էր այն ճանաչել անվավեր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10. հոդվածի, 234.6. հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է գնումների հետ կապված վեճերի քննության հատուկ ընթացակարգ: Մասնավորապես, այն հանգում է հետևյալին.

1.դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ կայացնում է օրենքով նախատեսված ապացույցները պահանջելու մասին որոշում,

2.նշված որոշումը ենթակա է կատարման պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո հինգօրյա ժամկետում,

3.նշված ժամկետից հետո ապացույցներ ներկայացվել որպես կանոն չեն կարող, ներկայացված ապացույցները համարվում են օրենքով նախատեսված կարգի խախտմամբ

ներկայացված ապացույցներ, եթե պատասխանողը չի հիմնավորում ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով,

4.վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը

5.վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը պատասխանողը պետք է կրի օրենքով նախատեսված ընթացակարգի պահպանմամբ, այսինքն՝ դատարանի՝ ապացույց պահանջելու մասին որոշումն ստանալուց հետո հինգօրյա ժամկետում:

Տվյալ դեպքում, Դատարանը 31.07.2023 թվականին կայացրած ապացույց պահանջելու մասին որոշմամբ սահմանել է, որ սույն քաղաքացիական գործով պատասխանողը որպես ապացույց դատարան պետք է ներկայացնի գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ինչպես նաև նույն որոշմամբ Դատարանը սահմանել է, որ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Դատարանը նույն որոշմամբ արձանագրել է նաև, որ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

Այս մասով, անհրաժեշտ է արձանագրել, որ Պատասխանողը ի կատարումն ապացույց պահանջելու մասին դատարանի որոշման Դատարան է ներկայացրել մի շարք փաստաթղթերի պատճեններ, որոնց ուսումնասիրությունից անգամ հնարավոր չէ հասկանալ, թե ինչպիսի փաստական հիմքերի առկայության պայմաններում և պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված կոնկրետ որ հիմքով է ի վերջո պատվիրատուն նախաձեռնել պայմանագրի միակողմանի լուծման գործընթացը և կայացրել հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշում:

Տվյալ դեպքում, գտնում է, որ Պատասխանողը դատարան չի ներկայացրել որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց վիճարկվող որոշման հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով, կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու կապակցությամբ, որպիսի պարտականությունը ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10. հոդվածով, այնպես էլ Դատարանի որոշմամբ դրված էր պատասխանողի վրա, ուստի գտնում է, որ ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով պատասխանողը պետք է կրի իր կողմից ապացուցման ենթակա փաստը չապացուցելու բացասական հետևանքները:

Ընդհանրացնելով վերոգրյալը, գտնում է, որ հայցվորի հետ կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու և վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին պատասխանողի կայացրած որոշումը զուրկ է փաստական և իրավական հիմքերից, այն չի կարող համարվել պատճառաբանված որոշում, որպիսի պահանջը նախատեսված է «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 46-րդ հոդվածներով, ուստի հայցվորի պահանջը հիմնավոր է և ենթակա էր բավարարման ամբողջությամբ:

Ինչպես վերը նշվեց՝ Հայցվորի և Պատասխանողի միջև կնքվել է լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների մասին պայմանագիր:

Սույն գործով օբյեկտիվ իրականությունը կայանում է նրանում, որ ի սկզբանե Երևանի քաղաքապետարանի կողմից առաջարկ է արվել ներդնել առավել օպերատիվ առցանց համակարգ, որտեղ ներգրավված են եղել Երևանի քաղաքապետարանի թվով 5 աշխատակիցներ՝ տարբեր վարչություններից:

Սույն պայմանագրի կատարման սկզբում հայցվորը թեժ գծի հեռախոսահամարով ստանում էր շաբաթական շուրջ 600 զանգ, կապված լուսացույցերի աշխատանքների խափանման հետ, որոնց մեծ մասը առկա են եղել երկար ժամանակ և չեն սպասարկվել նախկինում: Այնուհետև՝ պատշաճ ծառայության արդյունքում ստացվել է շաբաթական շուրջ 20 զանգ:

Պայմանագրի հաստատման պահից հայցվոր ընկերությունում գործել է 24/7 սպասարկման կենտրոն թեժ գծի 8584 հեռախոսահամարով: Սպասարման սրահի կողմից կառավարվող աշխատանքները իրականացվել են taskmanag համակարգի օգնությամբ, ինչի արդյունքում ևս խնդիրներին տրվել են լուծում առավել սեղմ ժամկետներում:

Պայմանագրի Հավելված 1-ի 28 կետում նշված Streettraffic համակարգին ինտեգրման անհաջող փորձերից հետո, խնդրի լուծման նպատակով, հայցվոր ընկերության աշխատակիցները այցելել են Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչություն խորհրդատվություն ստանալու համար, որտեղ և պարզվել է, որ վերոնշյալ համակարգը չի պատկանում Երևանի քաղաքապետարանին, այլ պատկանում է մասնավոր կազմակերպությանը, որի արդյունքում առաջացել է անհաղթահարելի խոչընդոտ համակարգին ինտեգրման համար, որից հետո փորձարկվել է նոր համակարգ, որի գործարկումը նույնպես ունի տեխնիկական խնդիրներ, քանի որ խաչմերուկներում տեղադրված են տարբեր տեսակի կառավարման համակարգեր, որոնց մասին տեխնիկական բնութագրեր առկա չեն, չկան սարքավորումների վերաբերյալ որևէ փաստաթղթեր:

Չնայած վերոգրյալ հանգամանքին, հայցվորը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները պատշաճ ծառայություն մատուցելու համար, այսինքն՝ վերը նշված խնդիրները որևէ եղանակով չեն նսեմացրել մատուցված ծառայության որակը և պատշաճությունը:

Երևան քաղաքում եղել են տասնյակ խաչմերուկներ, որոնք ինտեգրված չեն Streettraffic համակարգին, հին սարքավորումների պատճառով, որի արդյունքում հայցվոր ընկերությունը որոշում է կայացրել իրականացնել նոր ներդրում՝ արդիականացնելով կառավարման սարքերը՝ փոխարինելով նորերով:

Նպատակ ունենալով ավելի բարձր որակի մատուցել պայմանագրով նախատեսված ծառայությունները, հայցվոր ընկերությունը ձեռք է բերել տրանսպորտային միջոց, որով ընկերության աշխատակիցներն իրականացնում են շրջիկ և ստուգայց երթեր քաղաքի տարբեր հատվածներով ցերեկային և գիշերային ժամերին, ինչի արդյունքում հայտնաբերվել են խնդիրներ կապված լամպերի և ծածկերի փոխարինման, մաքրության հետ, որոնց լուծմանն ուղղված աշխատանքների մասով տեսաձայնագրությունները սահմանված կարգով ներկայացվել են պատասխանողին:

Հայցվորը պատշաճ և ժամանակին կատարել է այն բոլոր գործողությունները, որոնք առաջ են քաշվել և հայտնվել են պատասխանողի կողմից:

Դատարանը, որպես հայցվորի կողմից իր պայմանագրային պարտավորությունը իբրև ոչ պատշաճ կատարելու, հետևաբար և հայցի մերժման հիմք վկայակոչել է կողմերի միջև կատարված նամակագրությունները, որոնցով իբրև հիմնավորվում է, որ հայցվորը պատշաճ չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները:

Գտնում է, որ դատարանի նման եզրահանգումն ակնհայտ անհիմն է և չփաստարկված, քանզի նշված նամակագրությունները որևէ կերպ չեն վերաբերում կողմերի կողմից սույն գործի փաստական հիմքը կազմող պայմանագրային պարտավորությունների ժամանակին չկատարմանը, քանզի դրանք վերաբերելի են բացառապես Streettraffic համակարգով աշխատող օբյեկտների միացմանը նոր ներդրվող համակարգին, որի համար պայմանագրով սահմանված է եղել ժամկետ մինչև՝ 25.12.2023 թվականը, որպիսի հանգամանքը ևս անտեսվել է դատարանի կողմից:

Սույն քաղաքացիական գործով դատարանը գործը քննել է գրավոր ընթացակարգով և հայցը մերժելու մասին վճիռ կայացնելիս բավարարվել է ոչ թե վերբերելի ու թույլատրելի ապացույցները գնահատելով, այլ պարզապես պատասխանողի կողմից վկայակոչված և իրականության հետ որևէ աղերս չունեցող «փաստական հանգամանքներ»-ը որպես դատարանի կողմից պարզված և հաստատված համարված հանգամանքներ ներկայացնելով:

Մասնավորապես, դատարանը վիճարկվող դատական ակտում նշել է /մեջբերում/. *«Ինչ վերաբերում է Հայցվորի այն փաստարկին, որ Հայցվորը ստանձնած պարտավորությունները կատարել է պատշաճ կարգով, առանց որևէ խախտման, ինչը հաստատվում է հայցվորի կողմից 03.04.2023թ. և 02.05.2023թ. ներկայացված և Պատասխանողի կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրություններով և հարկային հաշիվներով, չկա որևէ հանձնման-ընդունման արձանագրություն, որը ներկայացվել է հայցվորի կողմից, բայց չի հաստատվել Պատասխանողի կողմից, չկա այդ ակտը չհաստատելու համար հիմք հանդիսացած որևէ բացասական եզրակացություն կամ առարկություն, հետևաբար հայցվորի կողմից որևէ ստանձնած պարտավորության խախտում թույլ չի տրվել և առկա չէ նման խախտման որևէ ապացույց, ապա Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի կողմից վկայակոչած վերը նշված հանձնման-ընդունման արձանագրությունները, հարկային հաշիվները և ակտերի ժամանակագրական առումով նախորդում են այն ժամանակահատվածին, որի ընթացքում Պատասխանողը, որպես Պատվիրատու, Հայցվորին ուղղված գրություններով պահանջել է կողմերի միջև կնքված պայմանագրից բխող պարտավորությունների պատշաճ կատարում: Նշվածը, այն դեպքում,*

երբ կողմերի միջև կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրի կատարումը ներառել է որոշակի ժամանակահատված՝ 10.03.2023-25.12.2023թ.-ը, և ըստ այդմ, ենթադրել Կատարողի կողմից պարբերական ծառայությունների մատուցում և մատուցված ծառայությունների արդյունքների ընդունում Պատվիրատուի կողմից փուլային եղանակով, Դատարանի գնահատմամբ չի կարող առհասարակ բացառել Կատարողի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորության երբևէ խախտում թույլ տալու հանգամանքը: Ուստի Հայցվորի վերոգրյալ փաստարկները չեն կարող հիմք հանդիսանալ փաստելու՝ Կատարողի կողմից իր պայմանագրային պարտավորությունների խախտում թույլ չտալու հանգամանքը»:

Վերոգրյալից ուղղակիորեն հետևում է, որ դատարանը գործը քննել և լուծել է ոչ թե գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման, այլ բացառապես ենթադրությունների հիման վրա՝ հիմնվելով բացառապես պատասխանողի կողմից հայտնած ոչ ճիշտ և չփաստարկված դիրքորոշման վրա:

Դատարանը չէր գա նման եզրահանգման, եթե գործի օբյեկտիվ իրականությունը բացահայտելու նպատակով հրավիրեր համապատասխան դատական նիստ և ենթադրությունների փոխարեն փորձեր նշված հանգամանքները պարզել դատական նիստով:

Այսինքն, գործը քննելիս դատարանը չի ղեկավարվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված՝ գնումների հետ կապված վեճերով վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ, հետևաբար սխալ եզրահանգման է եկել թե գնումների հետ կապված վեճով ապացուցման պարտականությունը բաշխելու կանոնների և ներկայացված ապացույցների գնահատման տեսակյունից:

Սույն քաղաքացիական գործով դատարանն ուներ հիմնականում մեկ հիմնական փաստի արձանագրման խնդիր ու պարտականություն այն է՝ Պատասխանողը դատարան չի ներկայացրել որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց վիճարկվող որոշման հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով, կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու կապակցությամբ, որպիսի պարտականությունը ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10. հոդվածով, այնպես էլ Դատարանի որոշմամբ դրված էր պատասխանողի վրա, ուստի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով պատասխանողը պետք է կրի իր կողմից ապացուցման ենթակա փաստը չապացուցելու բացասական հետևանքները:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դատարանը խախտել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 7-րդ հոդվածի 1-ին մասը, 8-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածի 1-ին մասը, 192-րդ հոդվածի 4-րդ մասը:

Սույն քաղաքացիական գործով դատարանը զուտ բավարարվել է պատասխանողի կողմից ներկայացված <<ապացույցներ>>-ի բովանդակության շարադրմամբ, առանց պարզելու դրանց հիմքում ընկած փաստական հանգամանքների համապատասխանությունը իրականությանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ դատական ակտի պատճառաբանությանը ներկայացվելիք իմպերատիվ պահանջը:

Ելնելով վերոգրյալներից՝ գտնում է, որ բողոքարկվող դատական ակտն անհիմն է, անօրինական, օրենքով սահմանված կարգով պատճառաբանված չէ, քանի որ այն կայացվել է ՀՀ Սահմանադրության, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք պահանջների խախտմամբ, հետևաբար բողոքարկվող դատական ակտը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներով սահմանված՝ դատական ակտին ներկայացվող պահանջներին:

Ելնելով վերոգրյալից խնդրում է վերաքննիչ բողոք բավարարել՝ բեկանել թիվ ԵԴ2/12884/02/23 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 11.09.2023 թվականի վճիռը և գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության, կամ բեկանել փոփոխել և հայցը բավարարել:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1) Երևանի քաղաքապետարանի (Պատվիրատու) և «Ուանքլիք» ՍՊԸ (Կատարող) միջև 10.03.2023թ. կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծառայությունների գնման պայմանագրով Պատվիրատուն հանձնարարել է, իսկ Կատարողը ստանձնել Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով: Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը, 2.1.2 կետի համաձայն՝ եթե մատուցվել է պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն. ա) չընդունել ծառայությունը իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը. բ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, 2.1.3 կետի համաձայն՝ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը: Պայմանագրի 2.2.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին, 2.2.2 կետի համաձայն՝

Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը: Պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ, իսկ 3.3 կետի համաձայն՝ եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար, իսկ 5.2 կետի համաձայն՝ Պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Պայմանագրի 7.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին: (հատոր 2, գ.թ.20-23)

2)Պայմանագրի թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագրով սահմանված են Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայության բովանդակությունը կազմող թվով 41 ծառայություններ: (հատոր 2, գ.թ.24-26):

3)Երևանի քաղաքապետարանի և «Ուանքլիք» ՍՊԸ միջև 03.04.2023թ. կնքված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 1 ակտի համաձայն՝ թիվ ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծառայությունների գնման

պայմանագրի շրջանակում, հիմք ընդունելով թիվ Բ8909251493 հաշիվ ապրանքագիրը, Կատարողը հանձնել է, իսկ Պատվիրատուն ընդունել ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի 10.03.2023-25.12.2023թ.-ին /փաստացի՝ 10.03.2023թ.-23.03.2023թ./ մատուցված ծառայությունները: (հատոր 2, գ.թ.33-35):

4)Երևանի քաղաքապետարանի և «Ուանքլիք» ՍՊԸ միջև 02.05.2023թ. կնքված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 2 արձանագրության և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 2 ակտի համաձայն՝ թիվ ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծառայությունների գնման պայմանագրի շրջանակում, հիմք ընդունելով թիվ Բ0202180683 հաշիվ ապրանքագիրը, Կատարողը հանձնել է, իսկ Պատվիրատուն ընդունել ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի 10.03.2023-25.12.2023թ.-ին /փաստացի՝ 06.04.2023թ.-30.04.2023թ./ մատուցված ծառայությունները: (հատոր 2, գ.թ.36-38):

5) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության 11.05.2023 թվականի թիվ 14/79676-23 գրությամբ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը հայտնվել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Ուանքլիք» ՍՊ ընկերության միջև կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծառայությունների գնման պայմանագրի 1.1 կետը հստակ սահմանում է ծառայությունների մատուցման պահանջները՝ համաձայն նշված պայմանագրի թիվ 1 հավելվածի: Միաժամանակ պայմանագրի 5.2 կետը սահմանում է պայմանագրի թիվ 1 հավելվածի պահանջներին չհամապատասխանող ծառայությունների մատուցման դեպքում սահմանված տուգանքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրով սահմանված ծառայությունները սկսվել են մատուցվել 10.03.2023թ.-ից, իսկ պայմանագրի թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագրով սահմանված 27, 28, 41 այլ կետերի պահանջները չեն կատարվել, ներկայումս դիտարկվում է կիրառել թիվ ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծառայությունների գնման պայմանագրի 5.2, 2.1.2 և 2.1.3 կետերը: (հատոր 2, գ.թ.102):

6) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության 16.05.2023 թվականի թիվ 14/83090-23 գրությամբ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը հայտնվել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Ուանքլիք» ՍՊ ընկերության միջև կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ թիվ 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանող ծառայությունների մատուցման յուրաքանչյուր դեպքում կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Հիմք ընդունելով՝ վերոգրյալը տեղեկացվել է, որ նախատեսվող տուգանքը կհաշվարկվի և կհաշվանցվի համաձայն պայմանագրի 5.4 կետի: (հատոր 2, գ.թ.103):

7) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության 19.05.2023 թվականի թիվ 14/87109-23 գրությամբ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը հայտնվել է, որ հնարավորինս սեղմ ժամկետներում, անհրաժեշտ է ներքոհիշյալ աշխատանքների վերաբերյալ տեսաձայնագրում և տրամադրում պատվիրատուին, նշելով կատարված աշխատանքների ժամանակահատվածը: (հատոր 2, գ.թ.104-015):

8)«ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության տնօրեն Արթուր Ամիրխանյանի կողմից ի պատասխան Երևանի քաղաքապետարանի 14/79676-23, 14/83090-23, 14/87109-23 գրությունների հայտնվել է, որ ներկայացնում է «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» պայմանագրով

նախատեսված աշխատանքների կատարման տեսաձայնագրություններ: Նշել է նաև, որ Երևանի քաղաքապետարանի կողմից առաջարկ է արվել ներդնել առավել օպերատիվ առցանց համակարգ, որտեղ ներգրավված են եղել Երևանի քաղաքապետարանի թվով հինգ աշխատակիցներ՝ տարբեր վարչություններից: Նաև արձանագրել է, որ «ԵՔ-ՀԲՄԾՁԲ- 23/2» պայմանագրի կատարման սկզբում «Ուանքլիք» ՍՊԸ-ն թեժ գծի հեռախոսահամարով ստացել է շաբաթական շուրջ 600 զանգ, կապված լուսացույցերի աշխատանքների խափանման հետ, որոնց մեծ մասը առկա են եղել երկար ժամանակ և չեն սպասարկվել նախկինում: Այժմ ստանում են շաբաթական շուրջ 20 զանգ: «ԵՔ-ՀԲՄԾՁԲ- 23/2» պայմանագրի հաստատման պահից մեր ընկերությունում գործել է 24/7 սպասարկման կենտրոն թեժ գծի 8584 հեռախոսահամարով: Սպասարկման սրահի կողմից կառավարվող աշխատանքները իրականացվում են taskmanager համակարգի օգնությամբ, ինչի արդյունքում ևս խնդիրներին տրվում է լուծում առավել սեղմ ժամկետներում: «ԵՔ-ՀԲՄԾՁԲ- 23/2» պայմանագրի Հավելված 1-ի 28 կետում նշված Streettraffic համակարգին ինտեգրման անհաջող փորձերից հետո, խնդրի լուծման նպատակով, ընկերության աշխատակիցները այցելել են Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչություն խորհրդատվություն ստանալու համար, որտեղ և պարզվել է, որ վերոնշյալ համակարգը չի պատկանում Երևանի քաղաքապետարանին, այլ պատկանում է մասնավոր կազմակերպությանը, որի արդյունքում առաջացել է անհաղթահարելի խոչընդոտ համակարգին ինտեգրման համար: Այս պահին փորձարկվում է նոր համակարգ, որի գործարկումը նույնպես ունի տեխնիկական խնդիրներ, քանի որ խաչմերուկներում տեղադրված են տարբեր տեսակի կառավարման համակարգեր, որոնց մասով տեխնիկական բնութագրեր առկա չեն, չկան սարքավորումների վերաբերյալ որևէ փաստաթղթեր: Տեղեկացվել է նաև, որ Երևան քաղաքում եղել են տասնյակ խաչմերուկներ, որոնք ինտեգրված չեն եղել Streettraffic համակարգին, հին սարքավորումների պատճառով, որի արդյունքում ընկերությունը որոշում է կայացրել իրականացնել նոր ներդրում արդիականացնելով կառավարման սարքերը՝ փոխարինելով նորերով: Նպատակ ունենայով բարձր որակի մատուցել «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» պայմանագրով նախատեսված ծառայությունները, ընկերությունը ձեռք է բերել ևս մեկ տրանսպորտային միջոց, որով ընկերության աշխատակիցներն իրականացնում են շրջիկ և ստուգիչ երթեր քաղաքի տարբեր հատվածներով ցերեկային և գիշերային ժամերին, ինչի արդյունքում հայտնաբերվել են խնդիրներ կապված լամպերի և ծածկերի փոխարինման, մաքրության հետ, որոնց լուծմանն ուղղված աշխատանքների մասով կից ներկայացվել են տեսաձայնագրություններ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրել է տրամադրել ողջամիտ ժամկետ, որպեսզի ներդրվի նոր մոնիթորինգային համակարգ, քանի որ տեխնիկապես ավելի բարդ է տարբեր սարքեր ներդնել մեկ համակարգում: Նման ինտեգրումները բավականին բարդ և ժամանակատար աշխատանքներ են, խնդրել է նաև չկիրառել «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը: (հատոր 2, գ.թ.106):

9) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության 25.05.2023 թվականի թիվ 14/91359-23 գրությամբ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը հայտնվել է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր ամիս հանձնման- ընդունմանը կից տրամադրել տվյալ ամսվա կատարված աշխատանքների տեսաձայնագրում, որտեղ հստակ օրերով կնշվի կատարված աշխատանքի օրը և վայրը: Ինչ վերաբերում է ողջամիտ ժամկետ տրամադրելուն հայտնել է,

որ պայմանագրի կնքման օրվանից տրամադրված է եղել ժամկետ ապահովելու պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջները: Միաժամանակ տեղեկացվել է նաև, որ նախատեսվող տուգանքը կհաշվարկվի և կհաշվանցվի համաձայն պայմանագրի 5.4 կետի: (հատոր 2, գ.թ.107):

10)Երևանի քաղաքապետարանի կողմից «ՌԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը հասցեագրված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 09.06.2023թ. ծանուցմամբ հայտնվել է հետևյալը. «Երևանի քաղաքապետարանի և «Ռանքլիք» ՍՊ ընկերության միջև 2023 թվականի մարտի 10-ին կնքված «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայությունների մատուցումը: (...) Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը. ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը: (...) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ռանքլիք» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ բանկային երաշխիքների գումարների գանձման նպատակով: «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն

հաջորդողքառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Ընդ որում, եթե՝ սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին. մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում»: (հատոր 2, գ.թ.30-32):

11)https://gnumner.minfin.am/hy/search/ կայքէջից արտատպվածքի համաձայն՝ «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվել է 09.06.2023 թվականին: (հատոր 2, գ.թ.98):

12)Երևանի քաղաքապետի 15.06.2023 թվականի թիվ 1552-Ա որոշման համաձայն՝ Ընկերությունը խախտելով Պայմանագրով սահմանված պարտավորությունները չի մատուցել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայությունները: Երևանի քաղաքապետարանը՝ դեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3-րդ կետի պահանջներով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի հունիսի 9-ին և պայմանագիրը հունիսի 10-ի դրությամբ համարվում է լուծված: Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով «Ուանքլիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասանկցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա: (հատոր 2, գ.թ.39-40):

13)Երևանի քաղաքապետարանի կողմից «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը հասցեագրված թիվ 14/118401-23 գրությամբ հայտնվել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Ուանքլիք» ՍՊԸ միջև 10.03.2023թ. կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծվել է, քանի որ ընկերության կողմից մատուցված ծառայությունները չեն համապասխանել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Պայմանագիրը ս. թ. հունիսի 09-ից համարվում է միակողմանի լուծարված և հնարավոր չէ փոփոխել: Միաժամանակ տեղեկացվել է, որ վճարումը չի կարող իրականացվել, քանի որ մատուցված ծառայությունները չեն համապատասխանել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին: (հատոր 2, գ.թ.41):

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վերաքննիչ դատարանը սույն քաղաքացիական գործով կայացրած դատական ակտը վերանայում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, այն է՝ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, պայմանով, որ վերաքննիչ բողոք բերողը իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում:

Մինչ վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալը Վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել, որ սույն գործով ներկայացված հայցադիմումով Հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի և «Ուանքլիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 10.03.2023 թվականին կնքված թիվ ԵՔ-2ԲՄԾՁԲ-23/2 ծառայությունների գնման պայմանագրի 09.06.2023թ. միակողմանի լուծումը և որպես անվավերության հետևանք անվավեր ճանաչել «Ուանքլիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 15.06.2023թ. թիվ 1552-Ա որոշումը:

Պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի փաստական հիմքում ներկայացվել են **Հայցվորի կողմից ստանձնանած պարտավորությունը պատշաճ կատարվելու և պայմանագրի միակողմանի լուծման ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ հիմնավորումներ**: Իսկ «Ուանքլիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 15.06.2023թ. թիվ 1552-Ա որոշումն անվավեր ճանաչելու փաստական հիմքում դրվել է նաև **տվյալ որոշման պատճառաբանված չլինելու հանգամանքը:**

Գործի քննության արդյունքում կայացված դատական ակտով Դատարանը Պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջը մերժել է՝ պատճառաբանելով, որ *«Ուանքլիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից թույլ են տրվել պայմանագրային պարտավորությունների խախտումներ: Նշվածը հիմնավորվում է նաև հայցադիմումի պատասխանին կից ներկայացված՝ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության տնօրեն Արթուր Ամիրխանյանի կողմից ի պատասխան Երևանի քաղաքապետարանի 14/79676-23, 14/83090-23, 14/87109-23 գրությունների, ներկայացված գրության բովանդակությամբ, որով վերջինս, ի թիվս այլնի, խնդրել է տրամադրել ողջամիտ ժամկետ, որպեսզի ներդրվի նոր մոնիթորինգային համակարգ՝ պատճառաբանելով, որ տեխնիկապես ավելի բարդ է տարբեր սարքեր ներդնել մեկ համակարգում, նման ինտեգրումները բավականին բարդ և ժամանակատար աշխատանքներ են, ինչպես նաև խնդրելով չկիրառել «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը: Վերոգրյալն արդեն իսկ վկայում է Հայցվորի կողմից իր պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ և սահմանված ժամկետում չկատարելու հանգամանքը:*

Միաժամանակ, անդրադառնալով Հայցվորի՝ ստանձնած պարտավորությունները պատշաճ կարգով, առանց որևէ խախտման, կատարվելու մասին փաստարկներին, Դատարանն արձանագրել է, որ *Հայցվորի կողմից վկայակոչած վերը նշված հանձնման-ընդունման արձանագրությունները, հարկային հաշիվները և ակտերի ժամանակագրական*

առումով նախորդում են այն ժամանակահատվածին, որի ընթացքում Պատասխանողը, որպես Պատվիրատու, Հայցվորին ուղղված գրություններով պահանջել է կողմերի միջև կնքված պայմանագրից բխող պարտավորությունների պատշաճ կատարում: Նշվածը, այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրի կատարումը ներառել է որոշակի ժամանակահատված՝ 10.03.2023-25.12.2023թ.-ը, և ըստ այդմ, ենթադրել Կատարողի կողմից պարբերական ծառայությունների մատուցում և մատուցված ծառայությունների արդյունքների ընդունում Պատվիրատուի կողմից փուլային եղանակով, Դատարանի գնահատմամբ չի կարող առհասարակ բացառել Կատարողի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորության երբևէ խախտում թույլ տալու հանգամանքը: Ուստի Հայցվորի վերոգրյալ փաստարկները չեն կարող հիմք հանդիսանալ փաստելու՝ Կատարողի կողմից իր պայմանագրային պարտավորությունների խախտում թույլ չտալու հանգամանքը:

Վերաքննիչ բողոքի առանցքային փաստարկները վերաբերում են վիճարկվող՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը, ինչպես նաև Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 15.06.2023թ. թիվ 1552-Ա որոշման պատճառաբանված չլինելուն, մասնավորապես փաստարկներ են ներկայացվել այն մասին, որ *Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը և թիվ 1552-Ա որոշումը զուրկ են փաստական և իրավական հիմքերից, ուստի՝ չի կարող համարվել պատճառաբանված որոշում, որպիսի պահանջը նախատեսված է «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 46-րդ հոդվածներով:*

Անդրադառնալով վերաքննիչ բողոքի հիշյալ փաստարկների իրավաչափության հարցին՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Նույն մասին 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի իրավակարգավորման համաձայն՝ պայմանագիրը գնում կատարելու նպատակով կնքվող գրավոր գործարք է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 2-րդ մասի համաձայն՝ «Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա.խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ.որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

2.Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում **պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա**: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով»:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումներն ամրագրված են Սահմանադրական դատարանի մի շարք, մասնավորապես, ՍԴՈ-630, ՍԴՈ-753, ՍԴՈ-1270 որոշումներում, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (ՍԴՈ-1357):

«(...)իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու,

թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում:

(...)օրենքի որոշակիության պահանջ նախատեսելով հանդերձ՝ հնարավոր չէ բոլոր հարցերի կարգավորումը նախատեսել բացառապես օրենքով, այդ պատճառով այս հարցում կարևորվում է հատկապես դատական ատյանների կողմից օրենքի հստակ մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանն իր 03.05.2016թ. ՍԴՈ-1270 որոշմամբ արտահայտել է նաև այն իրավական դիրքորոշումը, որ «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի հիմքով մասնակցի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների էական խախտման հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթացը իրավական և օրինական գնահատելու համար պարտադիր պայման է օրենսդրի կողմից սահմանված իմպարտիվ պահանջների պահպանումը պատվիրատուի կողմից: Այդպիսի պահանջներից մեկն էլ վերաբերում է **մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշման պատճառաբանված լինելու կանոնին**, ինչը բխում է իրավական որոշակիության սկզբունից: Ընդ որում, այդ պահանջը ձևական բնույթ չի կրում, և չի կարող պահպանված համարվել այն դեպքում, երբ թեկուզ պատվիրատուի կողմից վկայակոչվում է <u>ինչ-որ խախտում</u>, սակայն այն բավականաչափ որոշակի, հստակ և կանխատեսելի չէ ու հնարավորություն չի ընձեռում կատարողի կամ ցանկացած այլ անձի համար հստակ բացահայտելու, <u>թե կոնկրետ ո՞ր պարտավորությունն է խախտվել, ի՞նչում է դրսևորվել այդ խախտումը, ո՞րն է դրա փաստական հիմքը:</u>

Ընդ որում, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ընդգրկելու համար հիմք հանդիսացող լիազոր մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված՝ անկախ այն հանգամանքից, թե կողմը փաստարկում է գնման գործընթացի շրջանակներում կնքված պայմանագրով նախատեսված խախտումների մասին, թե՝ ոչ: Այլ կերպ ասած, օրենսդիրը վիճարկվող որոշման ձևին առաջադրվող պահանջները պահպանված չլինելը դիտարկել է կարևոր նախապայման՝ նկատի ունենալով, որ օրենսդիրը նպատակ է հետապնդել գնումների գործընթացին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, և ցանկացած դեպքում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ընդգրկելու մասին վիճարկվող որոշման պատճառաբանվածության պահանջի պահպանման իրավաչափ նպատակներից հիմնականները՝ իրավական որոշակիության ապահովելն ու գնման գործընթացին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ ու բավարար

պայմաններ ստեղծելը, դրանց պաշտպանությունը երաշխավորելն են, որոնք ստեղծում են իրավունքների պաշտպանություն իրականացնելու հնարավորություն՝ զերծ մնալով իրավական անորոշությունից, որը սահմանափակում է գնման գործընթացին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունները:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ օրենսդրի նման տրամաբանության հիմքում ընկած է այն մոտեցումը, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում նման գործընթացին մասնակցող անձին ընդգրկելը այնպիսի իրավաբանական փաստ է, որը անմիջականորեն միջամտում է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեությանը, որոշակիորեն սահմանափակելով նրանց շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեություն իրականացնելու սահմանադրական հնարավորությունը: Ուստի օրենսդրորեն կարևորվել է քննարկվող յուրաքանչյուր դեպքում վրա հասնող անբարենպաստ հետևանքի հիմքում ընկած իրավական և փաստական հանգամանքների հստակությունը գնման գործընթացի մասնակցի համար, և միայն նման հստակությունը և վարքագծի կանխատեսելիությունը հնարավորություն կտա վերջիններիս ապահովել իրենց՝ ենթադրյալ խախտված իրավունքի դատական պաշտպանությունը, քանի որ դատական պաշտպանության իրացումը ոչ միայն ենթադրում է դատարան դիմելու ընթացակարգային հնարավորության առկայություն, այլև այդ հնարավորության բովանդակային իրացում, որը հնարավոր է միայն այն դեպքում, երբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող սուբյեկտը իրական հնարավորություն ունենա վիճարկելու լիազոր մարմնի՝ համապատասխան որոշման հիմքում որպես պատճառաբանություն նշված փաստական հանգամանքների առկայությունը, հիմնավորվածությունը և հավաստիությունը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ **պատճառաբանվածության վերաբերյալ նշված պահանջը** վերաբերում է նաև կատարողի կողմից **պայմանագրով ստանձնած պարտավորությունների էական խախտման հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու ծանուցմանը**: Մասնավորապես, պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետք է լինի պատճառաբանված այն աստիճան, որ հնարավորության տա ինչպես դրա հասցեատիրոջը, այնպես էլ քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցներին պարզել ու բացահայտել կատարողի կողմից թույլ տրված ենթադրյալ խախտման էությունը, բովանդակությունը և դրա հիմքում դրված հանգամանքները: Այլ կերպ ասած, ծանուցումը պետք է բովանդակի հստակ նշում այն մասին, թե ինչում է դրսևորվել կատարողի կողմից թույլ տրված պայմանագրի էական խախտումը, կոնկրետ ինչ պարտականություն չի կատարվել և ինչ ժամկետներում: Նման մոտեցումը համահունչ է նաև քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելու սկզբունքին այն իմաստով, որ պետք է կանխարգելվի պայմանագրի էական խախտման հիմքով կողմերի միջև կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու Պատվիրատուի իրավունքը, իսկ այդ իրավունքի իրացումը լինի նպատակային, հիմնավոր և պատճառաբանված և հնարավորություն տա ենթադրյալ խախտումը թույլ տված պայմանագրի կողմին կանխատեսել իր վարքագծի իրավական հետևանքները:

Տվյալ դեպքում, Երևանի քաղաքապետի 09.06.2023 թվականի ծանուցման մեջ նշվել է հետևյալը. *«(...) Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը.*

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը: (...) ***Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ուանքլիք» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝*** *պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: (...)»:*

Երևանի քաղաքապետի 15.06.2023 թվականի թիվ 1552-Ա որոշման համաձայն՝ **Ընկերությունը խախտելով Պայմանագրով սահմանված պարտավորությունները չի մատուցել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայությունները:** Երևանի քաղաքապետարանը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3-րդ կետի պահանջներով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի հունիսի 9-ին և պայմանագիրը հունիսի 10-ի դրությամբ համարվում է լուծված: Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով «Ուանքլիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասանկցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

Վերաքննիչ դատարանն ուսումնասիրելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 հավելվածը կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, արձանագրում է, որ դրանով սահմանվել է Ծառայության անվանումը, Ծառայության մատուցման հատկանիշները (տեխնիկական բնութագիր), դրա բովանդակությունը կազմող թվով 41 ծառայությունները, Պայմանագրի կատարման առավելագույն գումարի չափը՝ 81900000 ՀՀ դրամ, Ծառայության կատարման հասցեն:

Վերը նշված փաստական հանգամանքների և սույն գործով ներկայացված հայցի հիմքում դրված փաստերի համադրված վերլուծությամբ՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ինչպես Երևանի քաղաքապետի 09.06.2023 թվականի ծանուցումը, այնպես էլ Երևանի քաղաքապետի 15.06.2023 թվականի թիվ 1552-Ա որոշումը չեն պարունակում պատճառաբանություն, և առկա չէ հիմնավորում, թե Պայմանագրով սահմանված որ պարտավորությունը չի կատարվել և ինչու՞մ է արտահայտվել ենթադրյալ պարտավորության խախտումը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերագրելով Հայցվորին՝ Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայությունները չմատուցելու վերաբերյալ խախտում՝ Պատվիրատուն ծանուցումով և որոշմամբ չի բացահայտել, թե որն է այդ **խախտման փաստական հիմքը**, այն է՝ Պայմանագրով նախատեսված՝ Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայության բովանդակությունը կազմող և թիվ 1 հավելվածով նախատեսված թվով 41 անուն ծառայություններից կոնկրետ որը չի մատուցվել Կատարողի կողմից, ի՞նչ ժամկետներ են խախտվել: Այսինքն, ծանուցումով և որոշմամբ չի բացահայտվել

թե ինչու՞մ է արտահայտվել խախտումը, Երևան քաղաքում լուսագդանշանների պահպանման և սպասարկման ծառայության բովանդակությունը կազմող կոնկրետ որ ծառայությունը չի մատուցվել՝ այն դեպքում, երբ գործում առկա են Կատարողի կողմից մատուցված և Պատվիրատուի կողմից ընդունված ծառայությունների վերաբերյալ արձանագրություններ և հանձնման-ընդունման ակտեր, ինչը վկայում է այն մասին, որ Կատարողի կողմից, այդուհանդերձ, Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված որոշակի ծառայություններ **փաստացի մատուցվել են և դրանք ընդունվել են Պատվիրատուի կողմից:**

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին լիազոր մարմնի որոշմամբ դրանում ընդգրկված մասնակցի համար պետք է պարզ լինի, թե որոնք են իր կողմից թույլ տրված կոնկրետ խախտումները: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, միայն նման խախտումների մասին հստակ, կոնկրետ և որոշակի տեղեկությունների առկայությունը կարող էր վկայել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշման պատճառաբանվածության պարտականությունը պատասխանողի կողմից կատարված լինելու փաստի մասին, որը սույն դեպքում բացակայում է:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ խախտումը ձևականորեն բնութագրվել է որպես՝ *Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայությունների չմատուցում*, որպիսի ձևակերպումը, սակայն, բավականաչափ որոշակի չէ և չի բացահայտում, թե Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայություններից կոնկրետ որը չի մատուցվել՝ առաջացնելով Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված պարտականության էական խախտում:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ ի խախտումն Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատվիրատուի կողմից ենթադրյալ խախտման «նկարագրությունը» ներկայացվել է ոչ թե հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 15.06.2023 թվականի թիվ 1552-Ա որոշման մեջ, այլ Հայցվորին հասցեագրված այլ գրության, մինչդեռ օրենսդրի կողմից սահմանված՝ իրավական որոշակիության սկզբունքից բխող պահանջը վերաբերում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշմանը: Միաժամանակ, ծանուցման մեջ վկայակոչված՝ Հայցվորին վերագրված ենթադրյալ խախտումների ընդհանուր բնույթի նկարագրություններից ևս պարզ չէ, թե Հայցվորի կողմից Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով նախատեսված որ ծառայությունները չեն մատուցվել:

Ինչ վերաբերում է Հայցվորի կողմից պայմանագրային պարտավորության էական խախտում թույլ տալու փաստը «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության տնօրեն Արթուր Ամիրխանյանի կողմից ի պատասխան Երևանի քաղաքապետարանի 14/79676-23, 14/83090-23, 14/87109-23 գրությունների, ներկայացված գրության բովանդակությամբ (*որով վերջինս, ի թիվս այլնի, խնդրել է տրամադրել ողջամիտ ժամկետ, որպեսզի ներդրվի նոր մոնիթորինգային համակարգ՝ պատճառաբանելով, որ տեխնիկապես ավելի բարդ է տարբեր սարքեր ներդնել մեկ համակարգում, նման ինտեգրումները բավականին բարդ և*

ժամանակատար աշխատանքներ են, ինչպես նաև խնդրելով չկիրառել «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը) հաստատելու մասին Դատարանի եզրահանգմանը, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ պայմանագրային պարտավորության խախտման փաստը չի կարող հիմնավորվել միայն այդ գրության բովանդակությամբ այն պատճառով, որ դրանով հայցվորը չի ընդունել իր կողմից որևէ խախտում թույլ տալու փաստը, իսկ նոր ժամանակ տրամադրելու առթիվ ներկայացված խնդրանքը չի պայմանավորել Պատվիրատուի կողմից պահանջված որևէ կոնկրետ ծառայությունը չմատուցելու կամ այն սահմանված ժամկետում մատուցելու անհնարինության հանգամանքով:

Ուստի, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵՔ-2ԲՄԾՁԲ-23/2 ծառայությունների գնման պայմանագրի միակողմանի լուծումն իրավաչափ համարվել չի կարող, իսկ Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 15.06.2023 թվականի թիվ 1552-Ա որոշումը չի բավարարում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ պատճառաբանված լինելու օրենսդրական պահանջին, ինչն ինքնին բավարար է այն անվավեր ճանաչելու համար:

Ուստի նման դեպքերում Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված իրավունքից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել այլ եզրակացության, հաստատված է համարում նոր փաստ առ այն, որ ***թիվ ԵՔ-2ԲՄԾՁԲ-23/2 ծառայությունների գնման պայմանագիրը 09.06.2023թ. միակողմանի լուծումն իրավաչափ չէ, իսկ Երևանի քաղաքապետի 15.06.2023 թվականի թիվ 1552-Ա որոշումը չի բավարարում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ պատճառաբանված լինելու օրենսդրական պահանջին:*** Ըստ այդմ, կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետը, համաձայն որի՝ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է վճիռը՝ առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հաստատելով նոր փաստ կամ չհաստատված համարելով դատարանի հաստատած փաստը, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանի կողմից Դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար գործի նոր քննության անհրաժեշտությունը բացակայում է՝ նկատի ունենալով, որ առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հաստատել այն փաստը, որ սույն գործով վիճարկվող՝ թիվ ԵՔ-2ԲՄԾՁԲ-23/2 ծառայությունների գնման պայմանագրի 09.06.2023թ. միակողմանի լուծումն իրավաչափ չէ, իսկ Երևանի քաղաքապետի 15.06.2023 թվականի թիվ 1552-Ա որոշումը չի բավարարում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ պատճառաբանված լինելու օրենսդրական պահանջին:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասի համաձան՝ փաստաբանի ծախսը վճարում է նրան ներգրաված գործին մասնակցող անձը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված ծախսերի փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը /ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը/, գործի բարդությունը /վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը/, նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը:

Տվյալ դեպքում դատական ծախսերը կազմված են պետական տուրքի և փաստաբանի խելամիտ վարձատրության գումարներից:

Քննարկվող դեպքում Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումով խնդրել է Պատասխանողից հօգուտ Հայցվորի բռնագանձել 1.200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար՝ հիմք ընդունելով Ընկերության և «ԷՅ ԷՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի միջև կնքված իրավաբանական

ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով ու հավելվածով վճարման ենթակա գումարի չափը:

Հաշվի առնելով գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (հայցադիմում կազմելու, դատական նիստերի բացակայությունը), գործի տևողությունը՝ շուրջ մեկ ամիս, նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, վերաքննիչ բողոք ներկայացնելը և հայցի բավարարումը՝ Վերաքննիչ դատարանի գնահատմամբ փաստաբանի վարձատրության խելամիտ չափ պետք է սահմանել 200.000 ՀՀ դրամ և այդ գումարը բռնագանձել պատասխանողից հօգուտ Հայցվորի:

Անդրադառնալով պետական տուրքի գումարին՝ հաշվի առնելով, որ Հայցվորի կողմից հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարվել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական տուրքի գումարը՝ ընդհանուր 80.000 ՀՀ դրամ, ուստի վճիռը բեկնելու և հայցը բավարարելու վերաբերյալ նոր դատական ակտ կայացնելու պայմաններում պետական տուրքի փոխհատուցման պարտավորությունը բավարարված մասով պետք է դնել Պատասխանողի վրա՝ Երևան համայնքից հօգուտ Հայցվորի բռնագանձելով 80.000 ՀՀ դրամի չափով վճարված պետական տուրքի գումարը:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքով նախապես վճարված պետական տուրքի գումարի բաշխման հարցին և նկատի ունենալով բողոք բերած անձի կողմից նախապես պետական տուրք վճարվելու և վերաքննիչ բողոքը մասնակի բավարարվելու հանգամանքները՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Երևան համայնքից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 135,000 ՀՀ դրամի չափով վճարված պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 376-րդ, 380-րդ, 381-րդ հոդվածներով, 387-րդ հոդվածի 1-ին մասով, 391-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության վերաքննիչ բողոքը բավարարել՝ թիվ ԵԴ2/12884/02/23 քաղաքացիական գործով Դատարանի 11.09.2023թ. վճիռը բեկանել և փոփոխել՝ վճռի եզրափակիչ մասը շարադրելով հետևյալ կերպ.

«1. «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պայմանագիրը միակողմանի լուծելու և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

1.1. Անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի և «Ուանքլիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 10.03.2023 թվականին կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծառայությունների գնման պայմանագրի 09.06.2023թ. միակողմանի լուծումը:

1.2. Անվավեր ճանաչել «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 15.06.2023թ. թիվ 1552-Ա որոշումը:

2.Երևան համայնքից հօգուտ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության բռնագանձել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար:

2.1.Երևան համայնքից հօգուտ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության բռնագանձել 200.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3. Դատարանի 07.08.2023թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, այն է՝ Երևանի քաղաքապետարանին արգելել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին ներկայացնել պահանջ՝ թիվ 2365611028 բանկային երաշխիքը վճարելու մասով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի կայացումը, ինչպես նաև արգելել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին Պատասխանող Երևանի քաղաքապետարանին վճարել թիվ 2365611028 բանկային երաշխիքի գումարը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի կայացումը՝ պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:»:

2.Երևան համայնքից հօգուտ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության բռնագանձել 135.000 (հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար:

Որոշումը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ
Ն.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Ս.ԹՈՐՈՍՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Կ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ **Ն. ՄԱՐԳԱՐՅԱՆ**